ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՍԵՌԱՅԻՆ ԻՆՔՆԱՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԺԹ.00.03 - «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ԵՐԵՎԱՆ - 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝	հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Սամվել Սուրենի Խուդոյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մելսիկ Պարգևի Մկրտումյան** հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Լիդա Ռազմիկի Արամյան**
Առաջատար կազմակերպություն՝	**ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն**

Պաշտպանությունը կայանալու է 2024թ. հունվարի 25-ին ժամը 12:00-ին Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի թիվ 064 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2023 թ. դեկտեմբերի 15-ին:

064 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, հոգեբանական



գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Կամո Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը - Դեռահասության տարիքն անձի զարգացման յուրահատուկ փուլ է . հակասական, կարճ ժամանակահատվածի ընթացքում մեծաքանակ կենսաբանական, հոգեբանական, վարքային փոփոխություններով՝ բնավորության, ինտելեկտի, սեռական կողմնորոշման, հուզակամային ոլորտի զարգացման բեկումներով: Երեխաներն անճանաչելի, անկառավարելի, ագրեսիվ են դառնում, երբեմն՝ դեվիանտ վարք դրսևորում. այս տարիքում նույնիսկ սեռային վարքի, հոգե և սոցախտաբանական շեղումները տարածվածության պատճառով հարաբերական նորմա են համարվում: Այս հանգամանքները գիտական առումով խիստ կարևորում են ճգնաժամային համարվող այս տարիքը, մանավանդ, որ դրանց հաղթահարման գործում դեռևս լուրջ խնդիրներ կան, չնայած որ հոգեբանության՝ որպես ինքնուրույն գիտության ձևավորման շրջանից մինչև օրս այն բազմակողմանիորեն հետազոտվում է: Այս տարիքին անդրադարձել են այնպիսի խոշոր գիտնականներ, ինչպիսիք են Ժ.Ժ.Ռուսոն, Շ. Բյուլերը, Ս. Հոլը, Զ. Ֆրոյդը, Ա. Ֆրոյդը, Կ. Լևինը, Ա. Վալոնը, Լ.Ս.Վիգոտսկին, Է.Էրիքսոնը և այլոք: Թերևս սա միակ տարիքն է, որ նաև բազմակողմանի ազգագրական հետազոտության է ենթարկվել Ռ. Բենեդիկտի, Բ.Մալինովսկու, Մ. Միդի և այլոց կողմից: Թերևս ոչ մի այլ տարիք այնքան հետազոտված չէ, սակայն դեռահասությանն առնչվող բազմաթիվ գիտական և գործնական խնդիրներ դեռևս լուծվում չեն գտել: Հատկապես թույլ են հետազոտված դեռահասության ճգնաժամը, դրան հանգեցնող օրինաչափությունները, այն արտաքին և ներքին գործոնները, որոնք սրում են ճգնաժամը, այն հոգեբանամանկավարժական միջոցառումները, որոնք կարող են կանխել, մեղմել և հաղթահարել ճգնաժամը:

Դեռահասության ճգնաժամի հիմնախնդրին անդրադարձել են Շ.Բյուլերը, Լ.Ս.Վիգոտսկին, Ա.Ֆրոյդը, Հ.Վալոնը, Կ.Լևինը, Փ.Բլոսը, Է.Էրիքսոնը, Լ.Ի.Բոժովիչը, Կ.Ն.Պոլիվանովան, Ս.Ս.Խուդոյանը և ուրիշներ՝ ճգնաժամը քննելով տարբեր կողմերից: Շատ հետազոտություններում կարևորվում է սեռական հասունացման դերը ճգնաժամի առաջացման գործում, սակայն այս ենթադրությունը էմպիրիկ հետազոտության չի ենթարկվել, մասնավորապես հետազոտության չի ենթարկվել այն, թե ինչ դեր է խաղում սեռային ինքնահաստատումը դեռահասության ճգնաժամի առաջացման գործընթացում: Կիրառական տեսանկյունից մեր հետազոտությունը հրատապ է այն առումով, որ հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալու ճգնաժամի ընթացքում սեռային ինքնահաստատման դերը, ինչը չափազանց կարևոր է դեռահասների հոգեբանական խորհրդատվությունը, հոգեթերապիան, դաստիարակությունը ճիշտ կազմակերպելու համար:

Հետազոտության նպատակը. պարզել սեռային ինքնահաստատման գործընթացի դերը դեռահասության ճգնաժամի առաջացման գործընթացում:

Հետազոտության օբյեկտը -դեռահասության ճգնաժամն է:

Հետազոտությանն առարկան – սեռային ինքնահաստատման դերն է դեռահասության ճգնաժամի առաջացման գործում:

Ատենախոսության **վարկածը.** դեռահասության ճգնաժամը մեծապես պայմանավորված է ինքնահաստատման, հատկապես սեռային ինքնահաստատման գործընթացի առանձնահատկություններով՝ դժվարություններով, ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիայով: Մասնավորապես՝

✓ դեռահասի ինքնահաստատման, սեռային ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացվածության դեպքերին բնորոշ է այս տարիքի զարգացման ճգնաժամի սուր ընթացքը և հակառակը:

✓ Դեռահասության ճգնաժամի սուր ընթացքին ավելի բնորոշ է դեստրուկտիվ տիպի ինքնահաստատումը. ընդ որում, դեստրուկտիվ ինքնահաստատումը բնորոշ է ճգնաժամի ագրեսիվ դրսևորմանը, իսկ հրաժարումն ինքնահաստատումից՝ պասիվ, տագնապային դրսևորմանը: Ճգնաժամի թեթև ընթացքին ավելի բնորոշ է կոնստրուկտիվ տիպի ինքնահաստատումը, միջին ընթացքին՝ և՛ կոնստրուկտիվ և՛ դեստրուկտիվ տեսակները:

Հետազոտության խնդիրները. հետազոտության նպատակի և վարկածի հիման վրա առաջադրվել են դրանցից բխող հետևյալ հիմնական **խնդիրները**.

1. Ուսումնասիրել հոգեբանական մասնագիտական գրականության մեջ դեռահասության ճգնաժամի դրսևորումներին, ճգնաժամի և անձի սեռադերային ինքնահաստատման առանձնահատկություններին առնչվող տեսությունները, գիտական մոտեցումներն ու հայեցակարգերը, կատարել վերջիններիս համապարփակ վերլուծություն և համակարգում:

2. Փորձարարական հետազոտության ենթարկել դեռահասության ճգնաժամի դրսևորումները, ընթացքի առանձնահատկությունները, սրությունը և դրա հիման վրա դասակարգել դեռահասներին ըստ ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունների:

3. Փորձարարական հետազոտության ենթարկել դեռահասների ինքնահաստատման առանձնահատկությունները, սեռային ինքնահաստատվածության մակարդակները և ֆրուստրացվածությունը:

4. Էմպիրիկ հետազոտությունների արդյունքների քանակական, որակական և համեմատական վերլուծության հիման վրա պարզել, թե արդյոք դեռահասների ինքնահաստատվածության, մասնավորապես սեռային ինքնահաստատվածության մակարդակը, այդ պահանջմունքի ֆրուստրացիան ազդում են դեռահասության ճգնաժամի ընթացքի վրա:

Հետազոտության մեթոդոլոգիական և տեսական հիմքերը. հետազոտության հիմքում դրվել են զարգացման, դետերմինիզմի և համակարգայնության սկզբունքները: Դեռահասության ճգնաժամը դիտարկում ենք որպես պոլիդետերմինիստական երևույթ, այսինքն այն առաջ է գալիս մի շարք պատճառների, պայմանների, հանգամանքների առկայության պարագայում: Վերջիններս հանդես են գալիս որպես հիերարխիկ համակարգ, որի մեջ կարելի է առանձնացնել պատճառական շղթա, որի օղակները փոխպայմանավորված են: Մեր հետազոտության մեջ այդ շղթան պատկերացնում ենք հետևյալ կերպ. դեռահասության ճգնաժամի առաջացման գործում կարևոր դեր է խաղում այս տարիքում ինքնագիտակցության վերակառուցումը և սեռային ինքնագիտակցության արթնացումը (Ս. Խուդոյան), ինչին բնականաբար հաջորդում է սեռային ես-հայեցակարգի, ինքնագնահատականի ձևավորումը: Վերջինս էլ իր հերթին դեռահասին դրդում է ակտիվորեն ինքնահաստատվելու որպես սեռային ակտիվության սուբյեկտ: Ինքնահաստատման գործընթացի դժվարություններն էլ ըստ մեզ կարևոր դեր են խաղում դեռահասության ճգնաժամի առաջացման գործում:

Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել Զ. և Ա. Ֆրոյդների՝ անձի և զարգացման հոգեվերլուծական տեսությունները, Փ. Բլոսի, Է. Էրիքսոնի, Լ. Վիգոտսկու, Դ. Էլկոնինի, Հ. Ռեմշմիդտի, Լ. Բոժովիչի, Ս. Խուդոյանի անձի զարգացման և դեռահասության ճգնաժամի հայեցակարգերը: Հետազոտության տեսական հիմքերից ենք համարում նաև ֆրուստարցվածության մակարդակների գաղափարը (Կ. Ուրազաև, Ս. Խուդոյան), ըստ որի, պահանջմունքի անբավարարվածությունը, նպատակին հասնելու խոչընդոտները մի որոշակի մակարդակից հանգեցնում են ֆրուստրացվածության վիճակի և որոշակի մակարդակում հանգեցնում ճգնաժամի:

Հետազոտության մեթոդները և մեթոդիկաները. **հ**ետազոտության ընթացքում կիրառվել են զրույցի, հարցման մեթոդները (Ս. Խուդոյանի դեռահասության ճգնաժամի սրության և ինքնահաստատվածության մակարդակի հետազոտության հարցարանով, Լ.Ի.Վասերմանի սոցիալական ֆրուստրացվածության հետազոտման էքսպրես մեթոդիկայի մոդիֆիկացված տարբերակով և Ե.Ա. Կիրեևայի և Տ.Դ. Դուբովիցկայայի դեռահասության տարիքում ինքնահաստատման առանձնահատկությունների հետազոտման մոդիֆիկացված հարցարանով), Մ. Լյուշերի 8 գունային թեստը, ինքնանկարի, ընկերների, ընտանիքի անդամների նկարների մեթոդիկաները:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը և հուսալիությունն ապահովվել է ադեկվատ մեթոդաբանական սկզբունքների և հետազոտական մեթոդների ապարատի ընտրությամբ, տեսական բավարար հիմքերի ստեղծմամբ, կիրառված էմպիրիկ մեթոդների բազմազանությամբ, մեծ քանակությամբ հետազոտվողների ընդգրկմամբ, հետազոտության արդյունքների քանակական և

որակական վերլուծությամբ:

Հետազոտության գիտական նորույթը. հետազոտության մեջ տարբերակվում են ինքնահաստատման մինչ այդ չառանձնացված տեսակներ, մասնավորապես՝ ընդհանուր և սեռային ինքնահաստատման տեսակները: Վերջինս հոգեբանության մեջ գրեթե հետազոտված, նկարագրված չի և առաջին անգամ է մանրամասն տեսական և էմպիրիկ հետազոտության ենթարկվում: Վերլուծության են ենթարկվում սեռային ինքնահաստատման տարիքային առանձնահատկությունները: Տարբերակվում և քննվում է սեռային ես-հայեցակարգը: Ցույց է տրվում, որ դեռահասության տարիքում ինքնահաստատումն առավելապես սեռային ուղղվածություն ունի: Մյուս կողմից էմպիրիկորեն հիմնավորվում է, որ սեռային ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիան կարևոր դեր է խաղում դեռահասության ճգնաժամի առաջացման և ընթացքի առանձնահատկությունների պայմանավորման գործում: Բացահայտվել է, որ դեռահասության ճգնաժամը երկու ձևով է դրսևորվում՝ պասիվությամբ, դեպրեսիայով, տագնապներով և ագրեսիվ վարքով: Պարզվել է, որ սուր ճգնաժամի դեպքում դեռահասները նախընտրում են ինքնահաստատման դեստրուկտիվ ոճը, մեղմ ընթացքի դեպքում՝ կոնստրուկտիվ, միջին ընթացքի դեպքում՝ դեստրուկտիվ և կոնստրուկտիվ ինքնահաստատման ոճերը գրեթե հավասար են:

Հետազոտության տեսական նշանակությունը. Հետազոտության արդյունքները հարստացնում են դեռահասության ճգնաժամի առաջացմանը և սրմանը նպաստող գործոնների մասին պատկերացումները՝ ցույց տալով, որ ինքնահաստատման, մասնավորապես սեռային ինքնահաստատման առանձնահատկություններն ազդում են ճգնաժամի ընթացքի վրա: Մյուս կողմից ցույց է տրվում, որ ճգնաժամի տարբեր սրություն դրսևորող դեռահասներն ինքնահաստատվում են տարբեր ոճերով՝ կոնստրուկտիվ՝ բնորոշ է մեղմ ընթացքին, դեստրուկտիվ՝ բնորոշ է սուր ընթացքին, իսկ միջին ընթացքի պարագայում երկու ոճերն էլ հանդիպում են:

Հետազոտության կիրառական նշանակությունը. Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել դեռահասների հիմնախնդիրների հետ կապված հոգեբանական խորհրդատվության, հոգեթերապիայի ոլորտներում, հարաբերությունների կարգավորման, դաստիարակության գործընթացում: Հետազոտության ընթացքում բացահայտված փաստերը կարող են ներառվել անձի և զարգացման ճգնաժամերի հոգեբանության դասընթացներում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները

1. Դեռահասության ճգնաժամի բազմաթիվ հետազոտություններ են իրականացվել, սակայն այս ճգնաժամի և դրա դրսևորման առանձնահատկությունների ուսումնասիրությունն անձի ինքնահաստատման առանձնահատկությունների տեսանկյունից հնարավորություն կտա ամբողջական ու լիարժեք պատկերացում կազմել դեռահասության ճգնաժամի դրսևորումների և դրանք պայմանավորող գերծոնների պատճառահետևանքնային կապերի մասին:

2. Դեռահասության ճգնաժամը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից մեկն ինքնահաստատման (սեռային ինքնահաստատման) պահանջմունքի ֆրուստրացիան է, ընդ որում՝ սեռային ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացվածության դեպքերին բնորոշ է այս տարիքի զարգացման ճգնաժամի սուր ընթացքը:

3. Յուրաքանչյուր տարիքում ինքնահաստատումը որոշակի ոլորտում է առավել ակտուալ (օր.՝ հասուն տարիքում ինքնահաստատումը վերաբերում է անձի սոցիալական ստատուսի, ընտանեկան և մասնագիտական ակտիվության ոլորտներին), ըստ այդմ՝ դեռահասության տարիքում ինքնահաստատումը սեռային ոլորտին է վերաբերում, այսինքն դեռահասի համար առավել ակտուալ է ինքնահաստատումը որպես տղամարդ/կին:

4. Դեռահասության շրջանում սեռային ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացվածության արդյունքում այս տարիքի ճգնաժամի դրսևորման երկու տեսակ կարելի է առանձնել՝ տագնապներով, ասթենիկ, դեպրեսիվ վիճակներով և ագրեսիվ վարքով:

Ատենախոսության փորձաքննությունը- Ատենախոսության հիմնական դրույթները

ներկայացվել և քննարկվել են Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Կիրառական հոգեբանության ամբիոնի նիստերին, Բաթումի 21-րդ դար գիմնազիայում անցկացված սեմինարների և մի շարք հանրապետական և միջազգային կոնֆերանսների ընթացքում:

Ատենախոսության կառուցվածքը. Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու տեսական և մեկ հետազոտական գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից (114 անուն) և հավելվածից: Աշխատանքը պարունակում է 12 նկար, 15 դիագրամ, կազմված է 125 էջերից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը և հրատապությունը, սահմանվել են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, ներկայացվել են հետազոտության ընթացքում պաշտպանության առաջարկվող վարկածը, դրա տեսական ու մեթոդոլոգիական հիմքերը, հետազոտության մեթոդներն ու մեթոդիկաները, հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հուսալիությունը ապահովող հիմքերը, գիտական նորույթը, դրա տեսական ու գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները և դրանց փորձաքննությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Դեռահասության ճգնաժամը և անձի ինքնահաստատման հիմնախնդիրը»** խորագրով գլխում ներկայացվել են դեռահասության տարիքի, ճգնաժամի առանձնահատկությունների և ինքնահաստատման հիմնախնդրի ուսումնասիրությունները հոգեբանության մեջ: Այն բաղկացած է երկու ենթագլուխներից: «Դեռահասության տարիքի և ճգնաժամի առանձնահատկությունները» ենթագլուխը նվիրված է դեռահասության տարիքի հիմնական բնութագրերին, ճգնաժամի տեսություններին և էմպիրիկ հետազոտություններին: Այստեղ ներկայացվում են Ս.Հոլի, Շ.Բյուլերի, Է.Շպրանգերի, Ա.Ֆրոյդի, Լ.Ս.Վիգոտսկու, Ժ.Պիաժեի և այլոց դեռահասության տարիքին նվիրված հետազոտությունները, Փ.Բլոսի, Է. Էրիքսոնի, Լ.Ի.Բոժովիչի, Կ.Ն.Պոլիվանովայի, Ա.Պրիխոժանի, Լ.Շնայդերի, Ս.Խուդոյանի և այլոց դեռահասության ճգնաժամին նվիրված տեսությունները, ինչպես նաև Դ. և Ջ.Օֆֆեր ամուսինների, Ռոզենբերգ ամուսինների Կ. Դոուլինգի և այլոց էմպիրիկ հետազոտությունները:
Այս գլխի II՝ «Ինքնահաստատաման հիմնախնդիրը հոգեբանության մեջ» ենթագլխում, ներկայացվում են ինքնահաստատման հիմնախնդրին նվիրված փիլիսոփայական, հոգեբանական հետազոտությունները. քննվել են ինքնահաստատման վերաբերյալ փիլիսոփաներ Նիցշեի, Է. Կանտի, Ա. Շոպենհաուերի, հոգեբանության դասականներ՝ Ա.Ադլերի, Ա. Մասլոուի, Կ. Լևինի, Կ. Հորնիի, Գ. Օլպորտի, Է. Ֆրոմի տեսակետները, արդի արևմտյան և ռուս հոգեբաններ՝ Ե. Ալբերտիի, Մ. Էմմոնսի, Կլոդ Սթիլի, Հ. Հեկհաուզենի, Ն. Խարլամենկովայի Ի. Գետմանովի Գ. Սայկինայի և այլոց հետազոտությունները:

Ատենախոսության II ՝ **«Սեռային ինքնահաստատման դժվարությունները և դեռահասության ճգնաժամը»** խորագրով գլուխը 5 ենթագլուխ ունի: **«Սեռային ինքնահաստատման էությունը և հիմնական առանձնահատկությունները»** ենթագլխում քննվում են հոգեբանության մեջ ոչ այդքան տարածված «Սեռային ինքնահաստատում» հասկացության բովանդակությունը, էությունը, վերլուծվում սեռային ինքնահաստատման, որպես դեռահասության տարիքում, ինքնահաստատման հիմնական ոլորտի էությունը, տարբեր հեղինակների, մասնավորապես՝ Ի. Կոնի, Վ.Ա. Բարանենկոյի, Լ. Ա. Ռապոպորտի, Ս. Ժարկովի Ե.Վ. Սոկոլինսկայայի, Ն.Վ. Դվորյանչիկովի տեսակետները: Հեղինակը հիմնվում է Ս. Խուդոյանի այն տեսակետի վրա, որ ընդհանրապես ինքնահաստատումը վերացական երևույթ է, մարդը միշտ ինքնահաստատվում է կոնկրետ ոլորտում. յուրաքանչյուր տարիքում գերակշռում է ինքնահաստատման որևէ մասնավոր տեսակ. օրինակ մանկության շրջանում երեխան ինքնահաստատվում է որպես մարդ ընդհանրապես, հասունության շրջանում առավելապես որպես սոցիալական ակտիվության սուբյեկտ, իսկ դեռահասության տարիքում՝ որպես սեռային ակտիվության սուբյեկտ: Նշված հիմքով հեղինակը կարծում է, որ «սեռային ինքնահաստատումը» իր և այլոց աչքում սեփական անձի արժևորումն է որպես տղամարդ/կին և իր շրջապատում, միկրոմիջավայրում սեռային առումով ստատուսի ձեռքբերումը, վերաբերմունքի ձևավորումը: **«Սեռային ինքնահաստատման**

առանձնահատկությունները դեռահասության տարիքում» ենթագլխում ներկայացվում են դեռահասության տարիքում սեռային ինքնահաստատման դրսևորումները, առանձնահատկությունները, ձևերը, ըստ էության, նաև տեսականորեն հիմնավորվում է, որ սեռային ինքնահաստատումը սեռային ինքնագնահատականի և ուրիշների կողմից անձին որպես տղամարդ/կին տրվող գնահատականի բարձրացման ուղիներից է: Այն միջանձնային հարաբերություններում կարևոր տեղ է զբաղեցնում, մարդիկ հաշվի են առնում այդ պահանջմունքի առկայությունն ուրիշների մեջ, ինչը նույնպես կարող է դիտվել որպես ինքնահաստատվելու միջոց, կարող է դրսևորվել ինչպես վարքով, այնպես էլ խոսքով և ունի սեռային տարբերություններ: Ըստ Ս. Խուդոյանի, Դ. Դ. Իսաևի, Գ. Ա. Ցուկերմանի և այլոց, այս տարիքում սեռային ինքնահաստատման կարևոր ձևերից են նաև մեծերին (նաև տղաների կողմից հանցագործ աշխարհի վարքին, խոսքին այլ բնութագրերին) նմանակումը և փորձարարությունը: Երրորդ՝ «**Ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիան»** ենթագլխում քննվում են ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիայի հետազոտությունները, վերլուծվում են այս երևույթի էության, դրսևորման ձևերի (նյարդայնություն, տագնապ, հուսահատություն, ռեգրեսիվ վարք, ագրեսիա, պաշտպանական մեխանիզմների ի հայտ գալը և այլն) և հետևանքների վերաբերյալ՝ Կ. Լևինի, Է. Ֆրոմի, Ա. Մասլոուի, Ա. Բեկի Ս. Ռոզենցվեյգի, Ա. Դոլարդի, Ֆ. Վասիլյուկի և այլոց տեսակետները: Չորրորդ՝ «**Ինքնահաստատման (սեռային ինքնահաստատման) պահանջմունքի ֆրուստրացիան և դեռահասության ճգնաժամը»** ենթագլխում ներկայացվում են պահանջմունքների ֆրուստրացիայի դերը ճգնաժամերի առաջացման գործում, այս խնդրի հետազոտությունները, մասնավորապես նրանք, որոնք դեռահասության տարիքի խնդիրները և ճգնաժամը կապում են պահանջմունքների ֆրուստրացիայի հետ (Ա. Ֆրոյդ, Ֆ. և Ռ. Թայսոններ, Ջ. Քոլմեն, Լ.Ի.Բոժովիչ): Ի տարբերություն հոգեվերլուծաբանների, Լ. Ի. Բոժովիչը դեռահասության ճգնաժամը կապում է ոչ թե սեռական պահանջմունքի, այլ ինքնարտահայտման և ինքնադրսևորման պահանջմունքների դեպրիվացիայի: Այս դրույթը շատ կարևոր է, քանի որ ինքնարտահայտումը և ինքնադրսևորումը ինքնահաստատման կարևոր բաղադրիչներն են: Հեղինակն առաջարկում է մտցնել «Ֆրուստրացիայի շեմ» հասկացությունը՝ պահանջմունքների անբավարարվածության այն շեմը, որից այն կողմ արդեն սկսում են ի հայտ գալ ֆրուստրացիայի նշանները: Հինգերորդ՝ «**Հետազոտության տեսական հիմքերը, վարկածը, վարկածի հիմնավորումը»** ենթագլխում ներկայացվում են ատենախոսության տեսական հիմքերը՝ Լ.Ս. Վիգոտսկու, Դ.Բ. Էլկոնինի, Հ. Ռեմշմիդտի, Է. Էրիքսոնի, Լ.Ի. Բոժովիչի, Ս.Խուդոյանի տարիքային ճգնաժամերի տեսությունները, նաև ֆրուստարցվածության մակարդակների գաղափարը (Կ.Ֆ. Ուրազաև, Ս. Խուդոյան), ըստ որի պահանջմունքի անբավարարվածությունը, նպատակին հասնելու խոչընդոտները մի որոշակի մակարդակից են միայն հանգեցնում ֆրուստրացվածության վիճակի և որոշակի մակարդակում՝ ճգնաժամի: Այստեղ ներկայացվել են նաև վարկածը և դրա տեսական հիմնավորումը, այսինքն այն փաստերն ու փաստարկները, որոնք հաստատում են վարկածը:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Սեռային ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիան և դեռահասության ճգնաժամի առանձնահատկությունները. էմպիրիկ հետազոտություն»,** բաղկացած է 3 ենթագլուխներից, որոնք, իրենց հերթին՝ ենթաբաժիններից: Այստեղ անդրադարձ է կատարվել էմպիրիկ հետազոտության ծրագրին, մեթոդներին, ներկայացվել են դեռահասության ճգնաժամի դրսևորման առանձնահատկությունների և դեռահասների ինքնահաստատվածության մակարդակի էմպիրիկ հետազոտության արդյունքները, կատարվել է ճգնաժամի սրության ու ինքնահաստատվածության մակարդակի համեմատական հետազոտություն: Այս գլխի 1-ին ենթագլխում ներկայացված են էմպիրիկ հետազոտության նպատակը, խնդիրները, ընտրանքը, ծրագիրը և մեթոդները, հիմնավորվել է վերջիններիս ընտրությունը: Հետազոտությունների նպատակն է եղել պարզել, թե ինչ ազդեցություն են ունենում ինքնահաստատման /սեռային ինքնահաստատման/ դժվարությունները, այդ պահանջմունքի ֆրուստրացիան դեռահասության ճգնաժամի ընթացքի վրա:

Էմպիրիկ հետազոտության խնդիրներն են եղել.

1. Էմպիրիկ հետազոտության ենթարկել դեռահասության ճգնաժամի դրսևորումները, ընթացքի առանձնահատկությունները, սրությունը և դրա հիման վրա դասակարգել դեռահասներին ըստ ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունների:

2. Էմպիրիկ հետազոտության ենթարկել դեռահասների ինքնահաստատման առանձնահատկությունները, սեռային ինքնահաստատվածության մակարդակները և ֆրուստրացվածությունը:

3. Էմպիրիկ հետազոտությունների արդյունքների քանակական, որակական և համեմատական վերլուծության հիման վրա պարզել, թե արդյոք դեռահասների ինքնահաստատվածության, մասնավորապես սեռային ինքնահաստատվածության մակարդակը, այդ պահանջմունքի ֆրուստրացիան ազդում է դեռահասության ճգնաժամի ընթացքի վրա:

Հետազոտություններն անց են կացվել 2011-2017 թ. թ. ընթացքում, Վրաստանի Բաթումի քաղաքի հրեական Խեսեդ Ցվի կազմակերպության, Սբ. Փրկիչ հայկական եկեղեցու Մ.Մաշտոցի անվան կիրակնօրյա դպրոցների սաների հետ: Ընտրանքը կազմել են 11-16 տարեկան հայ, ռուս, վրացի, հրեա 178 դեռահասներ (84 տղա և 94 աղջիկ): Հետազոտությունն իրականացվել է ռուսերեն, հայերի հետ՝ հայերեն և ռուսերեն: Հետազոտություն իրականացնողը հիմնականում մասնակիցներին (նաև շատերի ընտանիքներին) ճանաչել է, դասավանդել, նրանց հետ միջոցառումներ և հոգեբանական աշխատանքներ է կատարել: Կիրառվել են զրույցի, հարցման մեթոդները (Ս. Խուդոյանի դեռահասության ճգնաժամի սրության և ինքնահաստատվածության մակարդակի հետազոտության հարցարան, Լ.Ի.Վասերմանի սոցիալական ֆրուստրացվածության հետազոտման էքսպրես մեթոդիկայի մոդիֆիկացված տարբերակ և Ե.Ա. Կիրեևայի և Տ.Դ. Դուբովիցկայայի դեռահասության տարիքում ինքնահաստատման առանձնահատկությունների հետազոտման մոդիֆիկացված հարցարան), Մ. Լյուշերի 8 գունային թեստը, ինքնանկարի, ընկերների, ընտանիքի անդամների նկարների մեթոդիկաները: Միևնույն երևույթը սկզբունքորեն տարբեր մեթոդներով հետազոտման նպատակն է եղել հետազոտության հավաստիության բարձրացումը: Զրույցի նպատակն է եղել վարկածի հիմնավորվածության պարզումը, իսկ մյուս մեթոդ/մեթոդիկաներինը՝ վարկածային դրույթների ապացուցումը:

Էմպիրիկ հետազոտություններն իրականացվել են երեք փուլով: Առաջին փուլում հետազոտության են ենթարկվել դեռահասության ճգնաժամի դրսևորման առանձնահատկությունները, ընթացքը, ինչի հիման վրա դեռահասները դասակարգվել են ըստ ճգնաժամի դրսևորման առանձնահատկությունների և ընթացքի սրության: II փուլում հետազոտվել են դեռահասների ինքնահաստատման, մասնավորապես սեռային ինքնահաստատման առանձնահատկությունները, ստրատեգիան, այդ պահանջմունքի ֆրուստրացիան և արդյունքների հիման վրա դեռահասները դասակարգվել են ըստ ինքնահաստատման առանձնահատկությունների, այդ պահանջմունքի ֆրուստրացվածության աստիճանի (հետազոտության բաժանումը առաջին և երկրորդ փուլերի պայմանական է, քանի որ ժամանակային առումով դրանք իրականացվել են նույն շրջանում, հաճախ նույն օրը): III փուլում հետազոտությունների արդյունքների համեմատական վերլուծության հիման վրա պարզվել է, թե ճգնաժամի տարբեր առանձնահատկություններ, սրության տարբեր աստիճաններ ունեցող դեռահասների մոտ ինչ առանձնահատկություններ և ֆրուստրացվածության աստիճան ունի ինքնահաստատման պահանջմունքը:

Երկրորդ՝ **«Դեռահասության ճգնաժամի դրսևորման առանձնահատկությունների և դեռահասների ինքնահաստվածության մակարդակի էմպիրիկ հետազոտություն»** ենթագլխում և դրա 7 ենթաբաժիններում ներկայացված են վերոնշյալ մեթոդներով և մեթոդիկաներով անցկացված հետազոտությունների արդյունքները: **Զրույցի մեթոդով** դեռահասության ճգնաժամի դրսևորման և սեռային ինքնահաստատվածության առանձնահատկությունների հետազոտությունն իրականացվել է կրկին նույն միջավայրում և մասնակցել են հրեա, ռուս, վրացի և հայ 11-16 տարեկան 34 դեռահասներ (14 տղա, 20 աղջիկ): Ատենախոսության մեջ սահմանվել են զրույցի նպատակը, առանձնահատկությունները, հարցերի խմբերը և բովանդակությունը: Զրույցի արդյունքների հիման վրա ըստ ճգնաժամի սրության առանձնացվել են սուր, միջին և մեղմ ընթացքները (թե՛ այս, թե՛ ինքնահաստատվածության որոշման համար հաշվի է առնվել նաև դեռահասների մասին հետազոտողի՝ որպես

տվյալ դպրոցների հոգեբանի ունեցած ինֆորմացիան, որը ձևավորվել էր երեխաների և ընտանիքների ուսումնասիրության, նրանց հետ շփման արդյունքում): Առանձնացվել են սուր ճգնաժամով՝ 4 (12%), մեղմ՝ 11 (32%) և միջին սրությամբ՝ 19 (56%) դեռահասներ: Ըստ սեռային ինքնահաստատվածության մակարդակի, ճգնաժամի սուր ընթացք դրսևորող բոլոր չորս դեռահասների մեջ էլ ակնհայտ են եղել ինքնահաստատման հետ կապված խնդիրներ, ինքնահաստատվածության ցածր մակարդակ, այդ պահանջմունքի ֆրուստրացիան: Ըստ էության, ճգնաժամի սուր ախտանշանները (ագրեսիվ վարքը, տխրությունը, հասակակիցների, ծնողների, ուսուցիչների հետ կոնֆլիկտները) մեծապես պայմանավորված են ինքնահաստատման բուռն ձգտմամբ և դրա խոչընդոտներով, այսինքն, դրևորվում են ի պատասխան այդ պահանջմունքի ֆրուստրացիայի: Մեղմ և միջին ընթացքի դեպքում ինքնահաստատվածությունը (հատկապես սեռային) բարձր կամ միջին մակարդակով կարող էր բնութագրվել (մեղմի ընթացքի դեպքում 11-ից 9-ի (82%) մոտ, իսկ միջին ընթացքի դեպքում՝ 19-ից 16-ի (84%) մոտ): Հրույցի արդյունքները թույլ են տալիս պնդել, որ դեռահասության ճգնաժամի ընթացքը մեծապես պայմանավորված է դեռահասների ինքնահաստատվածության (հատկապես սեռային) առանձնահատկություններով: Այսպես, սուր ճգնաժամ ունեցող դեռահասները որպես կանոն ինքնահաստատվածության ցածր մակարդակ ունեն (այդ պահանջմունքի ֆրուստրացվածություն), իսկ մեղմ և միջին ընթացքի դեպքում չեն հանդիպել ցածր ինքնահաստատվածություն ունեցողներ:

Ս. Խուդոյանի կողմից մշակած հարցարանով դեռահասության ճգնաժամի սրության և ինքնահաստատվածության մակարդակի հետազոտությանը մասնակցել են 178 աշակերտներ:

Դիագրամ 1. Ճգնաժամի ընթացքն ըստ հարցման արդյունքների (%)



Ատենախոսության մեջ սահմանվել են հարցման իրականացման սկզբունքները, գործընթացը, հիմնական պահանջներն ու ակնկալվող արդյունքները: Ըստ ճգնաժամի սրության աստիճանի առանձնացվել են սուր (26 անձ՝ 15%), մեղմ (42 անձ՝ 23%) և միջին (110 անձ՝ 62%) ընթացքով խմբեր:

Դիագրամ 2. Սեռային ինքնահաստատվածության մակարդակն ըստ հարցման արդյունքների (%)



Նույն հարցարանից ստացված արդյունքների հիման վրա ըստ սեռային ինքնահաստատվածության մակարդակի առանձնացվել են ցածր (61անձ՝ 34%), միջին (70 անձ՝ 39%) և բարձր (47 անձ՝ 27%) աստիճաններ:

Հետազոտության հավաստիությունը բարձրացնելու և առավել ճշգրիտ արդյունքներ ստանալու համար հետազոտությունը շարունակվել է **Մ. Լյուշերի 8 գունային թեստի** միջոցով՝ օգտագործելով թեսթի մեկնաբանման հայտնի ձեռնարկները և Լյուշերի թեստի համակարգչային ծրագիրը: Հետազոտություններն իրականացվել են 2012-2015թթ., վերը նշված կրթօջախների 11-16 տարեկան 118 դեռահասների (67 աղջիկ և 51 տղա) հետ, որոնցից 85–ը մասնակցել էին նաև նախորդ փուլի հետազոտություններին, իսկ 33–ը՝ ոչ: Ատենախոսությունում ներկայացվել են հետազոտության կատարման սկզբունքները, ընթացքը և արդյունքները, որոնց ամփոփմամբ սուր ճգնաժամ է գրանցվել 20 դեռահասի մոտ (17%), որոնցից 18–ի մոտ սուր ճգնաժամ էր գրանցվել նաև հարցման դեպքում: Միջին ընթացք է գրանցվել դեռահասներից 59-ի մոտ (50%), որոնցից 57–ի մոտ միջին ընթացք էր գրանցվել հարցման դեպքում ևս: Մեղմ ընթացք գրանցվել է 39 դեռահասի մոտ (մոտ 33%), որոնցից 39-ի մոտ էլ մեղմ ճգնաժամ էր գրանցվել հարցման արդյունքներով ևս: Հետագա հետազոտությունների համար ճգնաժամի սրության տարբեր աստիճանների առավել բնորոշ դրսևորումներ և երեք հետա-

զոտությունների ընթացքում համընկնող արդյունքներ ունեցող դեռահասների ընտրանք կազմելու համար կատարվել է նաև զրույցի, հարցման և Լյուշերի թեստի ճգնաժամի սրությանը վերաբերող արդյունքների **համեմատական վերլուծություն:** Արդյունքում առանձնացվել են **118 դեռահասներ**, ում մոտ երեք մեթոդներով իրականացված հետազոտության արդյունքները հիմնականում համընկնում էին:

Դիագրամ 3. Ճգնաժամի ընթացքի դրսևորումը դեռահասության տարիքում համեմատական վերլուծության արդյունքներ



Հարցման և Լյուշերի թեստի արդյունքներում եղել են չհամընկնելու ընդամենը 5 դեպքեր, որոնց իրական հոգեբանական վիճակը հայտնի է եղել՝ երեխաներին և նրանց ընտանիքները լավ ճանաչելու շնորհիվ: Համեմատությունների հիման վրա 178-ից առանձնացված 118 դեռահասներից ճգնաժամի սուր ընթացք են գրանցել 21-ը (18%), միջին՝ 61-ը (մոտ 52%), մեղմ՝ 36-ը (մոտ 32%):

Ինքնահաստատվածության մակարդակի ստացված արդյունքները ճշգրտելու նպատակով համեմատական վերլուծության արդյունքում առանձնացված 118 դեռահասների ընտրակազմի հետ կիրառվել է նաև անձի ֆրուստրացվածության հետազոտման ևս մեկ՝ **Լ. Ի. Վասերմանի սոցիալական ֆրուստրացվածության թեստը՝ մոդիֆիկացված տարբերակով**, որը կառուցված է միանգամայն այլ սկզբունքով. հետազոտվողը նշում է, թե իր անձի և միջանձնային հարաբերությունների որ կողմերից է գոհ, որից՝ դժգոհ: Մոդիֆիկացիայի էությունը հետևյալն է. ընդհանուր ֆրուստրացվածությանը վերաբերող պնդումները փոխարինվել են սեռային ինքնահաստատվածության ֆրուստրացիային վերաբերող նույնատիպ հարցերով: Նպատակը եղել է դեռահասների սեռային ինքնահաստատվածության ֆրուստրացիայի մակարդակի պարզումը, նախորդ հարցարանի արդյունքների հետ համեմատումը՝ երկու հարցարաններով ստացված արդյունքների համապատասխանության ստուգումը:

Դիագրամ 4. Լ. Վասերմանի՝ ինքնահաստատման ֆրուստրացվածության մակարդակի մեթոդիկայի արդյունքները (%)



Արդյունքների հիման վրա տարբերակվել են ինքնահաստատման (սեռային ինքնահաստատման) պահանջմունքի ֆրուստրացիայի երեք աստիճան՝ ցածր, միջին և բարձր: Ինքնահաստատման (սեռային ինքնահաստատման) ֆրուստրացվածության ցածր մակարդակ է գրանցվել 30 աշակերտների մոտ (25 %), միջին՝ 62 (52 %), և բարձր՝ 26 աշակերտի մոտ (23 %):

Ե.Ա.Կիրեևայի և Տ.Դ.Դուբովիցկայայի մեթոդիկան բացահայտում է դեռահասների ինքնահաստատման երեք տեսակ կամ ստրատեգիա՝ **կոնստրուկտիվ** (դրսևորվում է ուրիշներին օգնելով, պրոդուկտիվ գործունեությամբ, կրեատիվությամբ, ինչի շնորհիվ անձը զգում է իր արժեքը, նշանակալիությունը, արժանանում աջակցության), **դեստրուկտիվ** (նեգատիվիզմ, մարդկանց արժեքի ու նշանակալիության մերժում, ուրշներին ճնշում,ագրեսիա, դրանից բավարարվածության զգացողություն, որը բացասաբար է գնահատվում շրջապատի կողմից, արդյունքում՝ սեփական վարքի արդարացում՝ ինքնագնահատականը պահպանելու համար) և **հրաժարում ինքնահաստատումից** (դեպրեսիա, ավտոագրեսիա, հրաժարում ինքնաիրականացումից, ինքնազարգացումից, նվաճումների ցածր մակարդակ, ինքնանվաստացում, ինքնամերժում, պասիվ–անտարբեր վարք, ապագայի հստակ ծրագրերի, կյանքի իմաստի բացակայություն և այլն): Այս մեթոդիկայով ևս հետազոտության է ենթարկվել

առանձնացված 118 դեռահասների վերոնշյալ ընտրանքը: Նպատակն է եղել պարզել, թե ճգնաժամի սրության տարբեր աստիճաններ և ինքնահաստատվածության տարբեր մակարդակներ ունեցող դեռահասները ինքնահաստատման որ ստրատեգիան են կիրառում:

Դիագրամ 5. Դեռահասների ինքնահաստատման ստրատեգիաներն ըստ Ե.Ա. Կիրեևայի և Ս.Դ. Դուբովիցկայայի հարցարանի (%)



Արդյունքների հիման վրա առանձնացվեցին ինքնահաստատման երեք ստրատեգիա դրսևորող դեռահասները. մոտ 59%-ը (70 աշակերտ) ինքնահաստատվում է կոնստրուկտիվ ստրատեգիայով, մոտ 36 %-ը (42 աշակերտ)՝ դեստրուկտիվ, իսկ ինքնահաստատումից հրաժարվում է ընդամենը 6 աշակերտ (մոտ 5%):

Ինչպես նշել ենք վերևում, միևնույն երևույթի հետազոտությունը սկզբունքորեն տարբեր մեթոդներով էապես բարձրացնում է հետազոտության հավաստիությունը: Այդ նպատակով, համեմատական վերլուծության արդյունքում առանձնացված 118 դեռահասների հետ ինչպես ճգնաժամի սրությունը, այնպես էլ դեռահասների ինքնահաստատվածությունը հետազոտվել է նաև պրոյեկտիվ մեթոդով, այս դեպքում՝ **ինքնանկարի մեթոդիկայով:** Նկարները վերլուծելիս հիմք են ընդունվել Ե.Կափիթզի, Դ.Լյուդվիգի, Ջ.Դելաթի և Ն.Հենդրիքսոնի հետազոտությունները և Ե.Կափիթզի մարդու պատկերը նկարի հուզական ցուցիչները թեստը: Հետազոտությունը բաղկացած է եղել երեք թեստերից՝ «Ինքնանկար», «Ես և ընտանիքս» և «Ես և ընկերներս»,ըստ այդմ, առանձնացվել է դեռահասների ինքնահաստատման երեք ոլորտ՝ ա/ընդհանուր/սեռային, բ/ ինքնահաստատվածություն ընտանիքում, գ/ ինքնահաստատվածություն ընկերական շրջապատում: Ինքնահաստատվածության ցածր մակարդակի և այդ պահանջմունքի ֆրուստրացիայի նշան է համարվել, երբ նկարում առկա են եղել ցածր ինքնագնահատականի, անինքնավստահության, մեկուսացածության, տագնապի ակնհայտ նշաններ: Նույն կերպ ինքնահաստատվածության բարձր մակարդակի նշան է համարվել բարձր ինքնագնահատականի, ինքնավստահության, դրական ինքնավերաբերմունքի ակնհայտ նշանները, մնացած դեպքերում, երբ ակնհայտ նշանները բացակայել են, ինքնահաստատվածությունը համարվել է միջին մակարդակի: Պետք է ասել, որ զուտ ինքնանկարի, ընտանիքի և ընկերների նկարների հիման վրա անձի ընդհանուր ինքնահաստատվածության մակարդակի որոշումը բավական հարաբերական է և բարդ, քանի որ նկարի առանձնահատկությունները շատ հանգամանքներով են որոշվում (նկարչական ընդունակությունների, հասունության, նկարի վրա տրամադրության ազդեցության և այլն), սակայն երբ համեմատվում են նկարը և հարցման արդյունքները, պատկերն ավելի հստակ է դառնում:

Դիագրամ 6. Դեռահասների ինքնահաստատման մակարդակն ըստ ինքնանկարի արդյունքների (%)



Ինչևէ, զուտ ինքնանկարների առանձնահատկությունների հիման վրա ցածր ինքնահաստատվածություն է ախտորոշվել ընդամենը 22 դեռահասի մոտ (18,5%), բարձր՝ 28 (24%) և միջին ինքնահաստատվածություն՝ 68 դեռահասի մոտ (57,5%): Սեռային ինքնահաստատվածությունն ավելի ակնհայտ էր զգացվում ինքնանկարների մեջ: Ցածր սեռային ինքնահաստատվածություն ունեցող երեխաների մեծ

մասի մոտ կանացիությունն ու առնականությունն ընդգծող մանրամասները գրեթե բացակայում էին և հակառակը՝ բարձր սեռային ինքնահաստատվածություն ունեցող երեխաների մեջ սեռականությունն ընդգծող մանրամասներն ակնհայտ էին: Նկարների այս կողմի վերլուծությունը դժվարանում էր միջին և բարձր սեռային ինքնահաստատվածության ոչ ակնհայտ տարբերություններով: Նշենք նաև, որ որքան դեռահասն ավելի տարիքով մեծ էր կամ հասուն, այնքան նկարներն ավելի հագեցած էին կանացիությամբ/առնականությամբ, սեռային ինքնահաստատվածությունը բարձր էր: Այս տվյալները լիովին համապատասխանում են Բերնսի և համահեղինակների տվյալների հետ:

Դիագրամ 7. Դեռահասների սեռային ինքնահաստատվածության մակարդակն ըստ ինքնանկարների (%)



Ինքնանկարների հիման վրա ըստ սեռային ինքնահաստատվածության, առանձնացվել են 39 (33%)՝ բարձր, 58 (49%)՝ միջին և 21 (18%) ցածր սեռային ինքնահաստատվածություն ունեցող դեռահասներ:

Ընտանիքի նկարներով որոշվել է դեռահասների՝ ընտանիքում ինքնահաստատվածության մակարդակը՝ հիմնականում ըստ նկարների մեջ երեխայի դիրքի և մեծության: Եթե երեխան իրեն պատկերում էր ամենավերջում, նկարի ծայրամասում մեկուսացած, փոքր, անշուք, ենթադրվում է, որ նա ցածր ինքնահաստատվածություն ունի և հակառակը՝ եթե կենտրոնում, մեծ (հաճախ ծնողներից էլ մեծ), ենթադրվում էր ինքնահաստատվածության բարձր մակարդակ:

Դիագրամ 8. Ընտանիքում ինքնահաստատվածության մակարդակն ըստ ինքնանկարի (%)



Ինքնահաստատվածության միջին մակարդակ էր ախտորոշվում, երբ երեխան իրեն պատկերում էր ոչ մեջտեղում, ասենք ծնողների կամ քրոջ/եղբոր կողքը, սակայն վառ արտահայտված, նորմալ չափերով: Ըստ ընտանիքում ինքնահաստատվածության մակարդակի, առանձնացվել են 42 բարձր (35,5%), 61 միջին (51,5%), 15 ցածր (13%) ինքնահաստատվածությամբ դեռահասներ:

Ընկերների հետ նկարներում որոշվում էր դեռահասի՝ ընկերների մոտ ինքնահաստատվածության մակարդակը: Ախտորոշման հիմքում նկարում երեխայի դիրքը, մեծությունը, մանրամասները և գույներն են: Ցածր ինքնահաստատվածություն ենք համարում, եթե երեխան իրեն պատկերում է նկարի ծայրամասում, մյուսներից հեռու, փոքր, անշուք, եթե պատկերում է կենտրոնում, մեծ կամ ուրիշներին հավասար չափերով, ուրախ տրամադրությամբ, ենթադրում ենք, որ ինքնահաստատվածության բարձր մակարդակ ունի: Միջին մակարդակ ենք ախտրոշում, երբ երեխան իրեն պատկերում էր ոչ մեջտեղում ոչ ծայրամասում, ընկերներին մոտ, վառ արտահայտված, նորմալ չափերով:

Դիագրամ 9. Ընկերական շրջապատում ինքնահաստատվածության մակարդակն ըստ ինքնանկարի



Ըստ ընկերական շրջապատում ինքնահաստատվածության մակարդակի առանձնացվել են՝ բարձր ինքնահաստատվածություն ունեցող 37 (31%), միջին՝ 63 (54%), ցածր 18 (15%) դեռահասներ:

Դեռահասության ճգնաժամի սրության և դեռահասների ինքնահաստատվածության մակարդակի համեմատական հետազոտության շրջանակներում ատենախոսությունում նախորդ երկու փուլերի հետազոտությունների արդյունքների համեմատական վերլուծությունների հիման վրա փորձ է կատարվել պարզել, թե ճգնաժամի դրսևորման տարբեր առանձնահատկություններ և ընթացքի սրության տարբեր աստիճաններ ունեցող դեռահասների մոտ ինչ առանձնահատկություններ և ֆրուստրացվածության աստիճան ունի ինքնահաստատման պահանջմունքը:

Արդեն զրույցի մեթոդով իրականացրած հետազոտությունն ակնհայտ կապ արձանագրեց դեռահասության ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունների և դեռահասների ինքնահաստատվածության մակարդակի միջև: Այդ կապի հավաստիության մեջ համոզվելու համար անհրաժեշտ էր ավելի մեծ թվով հետազոտվողներ ընդգրկել և պարզել, թե իսկապես դեռահասության ճգնաժամի ընթացքի վրա ազդում է դեռահասների ինքնահաստատվածությունը:

Ատենախոսության 3-րդ գլխի 3-րդ ենթագլխում և դրա բաժիններում ներկայացված են դեռահասության ճգնաժամի սրության և դեռահասների ինքնահաստատվածության մակարդակի հետազոտությունների համեմատական վերլուծությունները: Նախ վերլուծված են ճգնաժամի սրության և դեռահասների ինքնահաստատվածության մակարդակի Ս. Խուդոյանի մշակած հարցարանով ստացված տվյալները՝ ճգնաժամի յուրաքանչյուր սրության աստիճանի դեպքում ինքնահաստատվածության մակարդակը 178 դեռահասների համար:

Դիագրամ 10. Դեռահասության ճգնաժամի սրության և ինքնահաստատվածության մակարդակի Ս. Խուդոյանի հարցարանի հետազոտության արդյունքները



Այսինքն, դեռահասության ճգնաժամի սուր ընթացքով 26 դեռահասներից սեռային ինքնահաստատվածության ցածր մակարդակ ունեն 16 դեռահաս (սուր ճգնաժամ դրսևորածների 61,5%-ը), 7 (27%)

դեռահասի մոտ միջին մակարդակի սեռային ինքնահաստատվածություն է, իսկ ճգնաժամի սուր ընթացքով խմբից 3 դեռահասներ (11,5%-ը) սեռային ինքնահաստատվածության բարձր մակարդակ ունեին: Ճգնաժամի միջին սրություն դրսևորած 110 դեռահասների մեջ սեռային ինքնահաստատվածության ցածր մակարդակ ունեին 35 (միջին սրության ճգնաժամի խմբի 32%) դեռահաս, միջին մակարդակ՝ 67 (61 %) , իսկ բարձր ինքնահաստատվածություն՝ 8 (7%) դեռահաս: Ճգնաժամի մեղմ ընթացք դրսևորած 42 դեռահասներից 6-ը (14%) ունեին ցածր ինքնահաստատվածություն, միջին ինքնահաստատվածություն՝ 13 (31%), իսկ բարձր ինքնահաստատվածություն՝ 23 դեռահաս (ճգնաժամի մեղմ ընթացքով խմբի 55%-ը): Այսպիսով, Ս. Խուդոյանի մշակած հարցարանով իրականացրած հետազոտության արդյունքների վերլուծությունը ակնհայտորեն ցույց է տալիս, որ դեռահասության ճգնաժամի սրության դրսևորումներում էական նշանակություն ունի դեռահասների ինքնահաստատվածության մակարդակը: Ինչպես տեսնում ենք, դեռահասների բարձր ինքնահաստատվածության դեպքում դեռահասության ճգնաժամն ավելի մեղմ է ընթանում, իսկ դեռահասների ցածր ինքնահաստատվածության դեպքում դեռահասության ճգնաժամն ավելի սուր է ընթանում:

Դեռահասության ճգնաժամի մեղմ, միջին և սուր ընթացք ունեցող 118 դեռահասների **Լ.Ի. Վասերմանի սոցիալական ֆրուստրացվածության հետազոտման էքսպրես մեթոդիկայի մոդիֆիկացված տարբերակով իրականացված հետազոտությունների արդյունքների համեմատական վերլուծության արդյունքում պարզ է դառնում**, որ սուր ճգնաժամ դրսևորած 21 դեռահասներից 15-ը (մոտ 72%-ը) ուներ ինքնահաստատման ֆրուստրացվածության բարձր մակարդակ, իսկ 6-ը (մոտ 28 %-ը)՝ միջին (ֆրուստրացվածության ցածր մակարդակ այս դեռահասների մեջ չարձանագրվեց): Ճգնաժամի միջին ընթացքով 61 դեռահասներից 8 դեռահասի մեջ (13%) ինքնահաստատման ֆրուստրացվածության բարձր մակարդակ է արձանագրվել, 42-ի մեջ (68%)՝ միջին մակարդակ, իսկ 11-ի մեջ (18%)՝ ցածր մակարդակ: Ճգնաժամի մեղմ ընթացք արձանագրած 36 դեռահասներից ինքնահաստատվածության ֆրուստրացվածության բարձր մակարդակ ունեին 3 դեռահաս (8%), միջին մակարդակ՝ 13 դեռահաս (36%) և ցածր մակարդակ՝ 20 դեռահաս (56%):

Դիագրամ 11. Լ.Ի. Վասերմանի մեթոդիկայի մոդիֆիկացված տարբերակով իրականացված հետազոտության արդյունքների վերլուծությունը



Այսպիսով՝ այս հետազոտությունը ցույց է տալիս, որ դեռահասության ճգնաժամի ընթացքի վրա ազդող գործոններից է նաև դեռահասի ինքնահաստատման (սեռային ինքնահաստատման) ֆրուստրացիան. դեռահասության տարիքի սուր ճգնաժամի դեպքում տեսնում ենք դեռահասի ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացվածություն և հակառակը:

Դեռահասության ճգնաժամի սրության աստիճանների և դեռահասների ինքնահաստատման առանձնահատկությունների **Ե.Ա. Կիրեևայի և Տ.Դ. Դուբովիցկայայի մոդիֆիկացված հարցարանով**

կատարված հետազոտությունների արդյունքների համեմատական վերլուծության նպատակն է եղել պարզել, թե ճգնաժամի տարբեր սրության ընթացքով դեռահասներն ինքնահաստատման ինչպիսի ոճեր են նախընտրում: Դեռահասության ճգնաժամի տարբեր սրության ընթացքով հետազոտվողների խմբերի՝ **Ե.Ա. Կիրեևայի և Տ.Դ. Դուբովիցկայայի մոդիֆիկացված հարցարանից** ստացված արդյունքների համեմատական վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ սուր ճգնաժամ ունեցող 21 դեռահասներից 6-ը (29%) ինքնահաստատվում էին կոնստրուկտիվ ոճով, 11-ը (52%)՝ դեստրուկտիվ ոճով, և 4 դեռահաս (19%) հրաժարվում են ինքնահաստատումից: Ճգնաժամի միջին ընթացք ունեցող 61 դեռահասներից 35-ը (57%) ինքնահաստատվում էին կոնստրուկտիվ ոճով, 25-ը (41%)՝ դեստրուկտիվ ոճով, իսկ 1 դեռահաս (մոտ 2%) հրաժարվում է ինքնահաստատումից: Ճգնաժամի մեղմ ընթացք արձանագրած 36 դեռահասներից 29-ը (80%) ինքնահաստատվում է կոնստրուկտիվ ոճով, 6-ը (17%)՝ դեստրուկտիվ ոճով, իսկ 1 դեռահաս (մոտ 3%) հրաժարվում է ինքնահաստատումից:

Դիագրամ 12. Ե.Ա. Կիրեևայի և Տ.Դ. Դուբովիցկայայի մոդիֆիկացված հարցարանով կատարված հետազոտությունների արդյունքների համեմատական վերլուծություն



Այսպիսով, ինչպես ցույց են տալիս վերլուծությունները՝ սուր ճգնաժամ դրսևորող դեռահասները նախընտրում են ինքնահաստատման դեստրուկտիվ ոճը, այսինքն ավելի ագրեսիվ են ինքնահաստատվում, իսկ ինքնահաստատումից հրաժարումը հարաբերականորեն քիչ է դրսևորվում: Թերևս այստեղ արտացոլվում են ճգնաժամի ագրեսիվ և պասիվ, տագնապներով ընթացող տեսակները (վերջիններս ավելի քիչ են հանդիպում): Կարելի է ենթադրել, որ ինքնահաստատման դեստուկտիվ ոճի ընրությունը կարևոր դեր է խաղում դեռահասության ճգնաժամի սրման գործընթացում, քանի որ լարվածություն է առաջացնում միջանձնային հարաբերություններում (իհարկե, հնարավոր է նաև հակառակ ազդեցությունը, այսինքն սրված ճգնաժամն է դեստրուկտիվ դարձնում ինքնահաստատումը):

Դեռահասության ճգնաժամի մեղմ, միջին և սուր ընթացք ունեցող դեռահասների ինքնանկարի, ընտանիքի և ընկերների նկարների վերլուծության արդյունքում պարզ է դառնում հետևյալը.

ա/ սուր ճգնաժամ արձանագրած 21 դեռահասների մեջ, ըստ ինքնանկարների, ցածր ընդհանուր ինքնահաստատվածություն ախտորոշվեց 10 անձի դեպքում (48%), միջին՝ 8 (38%) և բարձր՝ 3-ի (14%): Ցածր սեռային ինքնահաստատվածություն արձանագրվեց 9 դեռահասի մեջ (43%), միջին՝ 7 դեռահասի մեջ (33%) և բարձր՝ 5-ի մեջ (24%):

Ըստ ընտանիքի նկարի, ընտանիքում ցածր ինքնահաստատվածություն արձանագրվեց 9 դեռահասի մեջ (43%), միջին՝ 8 (38%) և բարձր՝ 4 դեռահասի մեջ (19%):

Ըստ ընկերների նկարների, ընկերական շրջապատում ցածր ինքնահաստատվածություն ուներ 11 դեռահաս (52%), միջին՝ 8 (38%), բարձր՝ 2 (10%):

Դիագրամ 13. Դեռահասության ճգնաժամի սուր ընթացք ունեցող դեռահասների ինքնանկարի, ընտանիքի և ընկերների նկարի վերլուծությունը (%)



բ/ Ըստ ինքնանկարների, ճգնաժամի միջին ընթացքով 61 դեռահասների մեջ ցածր ընդհանուր ինքնահաստատման մակարդակ ունեին 11 (18%), միջին՝ 42-ը (69%) և բարձր 8 (13%) դեռահաս: Ցածր սեռային ինքնահաստատվածություն ունեին 8 (13%), միջին՝ 38 (62%), բարձր 15 դեռահաս (25%): Ըստ ընտանիքի նկարի, ընտանիքում ցածր ինքնահաստատվածություն արձանագրվեց 4-ի (մոտ 7%), միջին՝ 41-ի (67%) և բարձր՝ 16 դեռահասի մեջ (26%): Ըստ ընկերների նկարների, ընկերական շրջապատում ցածր ինքնահաստատվածություն ուներ 4 դեռահաս (մոտ 7%), միջին՝ 40 (65%), բարձր՝ 17 (28%):

Դիագրամ 14. Դեռահասության ճգնաժամի միջին ընթացք ունեցող դեռահասների ինքնանկարի, ընտանիքի և ընկերների նկարների վերլուծությունը (%)



գ/ Դեռահասության ճգնաժամի մեղմ ընթացք արձանագրած 36 դեռահասներից. ըստ ինքնանկարների, ցածր ընդհանուր ինքնահաստատման մակարդակ ունեին 1 դեռահաս (մոտ 3 %), միջին՝ 18-ը (50%) և բարձր 17 դեռահաս (47%), ցածր սեռային ինքնահաստատվածություն ունեին 4 դեռահաս (11%), միջին՝ 13-ը (36%), բարձր 19 դեռահաս (53%):

Դիագրամ 15. Դեռահասության ճգնաժամի մեղմ ընթացք ունեցող դեռահասների ինքնանկարի, ընտանիքի և ընկերների նկարների վերլուծությունը (%)



Ըստ ընտանիքի նկարի արդյունքների վերլուծության, ընտանիքում ցածր

ինքնահաստատվածություն արձանագրվեց 2 դեռահասի մեջ (6%), միջին՝ 12-ի (33%) և բարձր՝ 22 դեռահասի մեջ (61%), ըստ ընկերների նկարների, ընկերական շրջապատում ցածր ինքնահաստատվածություն ուներ 3 դեռահաս (8 %), միջին՝ 15-ը (42 %), բարձր՝ 18 (50%):

Այսպիսով՝ ճգնաժամի ընթացքի առանձնահատկություններն արտացոլվում են նաև ինքնանկարում, ընտանիքի և ընկերների նկարներում: Այս դեպքում պատկերն այնքան էլ ակնհայտ չի. օրինակ՝ սուր ճգնաժամ արձանագրած դեռահասների մեջ չնայած գերակշռում էր ցածր ինքնահաստատվածությունը, սակայն հաճախ բավական բարձր ինքնահաստատվածություն էր արձանագրվում, ինչը մյուս թեստերին բնորոշ չէ: Թերևս այս դեպքում ազդեցություն էին ունենում այլ գործոններ, ասենք դեռահասի հասունությունը (որքան ավելի հասուն է դեռահասը, այնքան ինքնանկարներում սեռային մանրամասներն ավելի վառ են արտահայտվում) կամ նկարչական ընդունակությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեսական և էմպիրիկ հետազոտությունների արդյունքում հանգել ենք ստորև ներկայացվող եզրակացություններին:

1. Չնայած դեռահասության ճգնաժամի հիմնախնդիրը համարվում է առավել բազմակողմանի հետազոտված, այնուամենայնիվ, այս թեմայի բազմաթիվ հարցեր ընդհանրապես հետազոտված չեն կամ կարիք ունեն լրացուցիչ հետազոտությունների, ճշգրտումների: Մասնավորապես, հետազոտության չի ենթարկվել ինքնահաստատման՝ սեռային ինքնահաստատման պահանջունքի ֆրուստրացիայի դերը դեռահասության ճգնաժամի առաջացման գործընթացում: Բավական աղոտ է հետազոտված նաև ինքնահաստատման հիմնախնդիրը հոգեբանության մեջ, հատկապես թույլ են հետազոտված անձի կենսագործունեության առանձին ոլորտներում (օրինակ՝ ընտանեկան, սեռային ոլորտներում) կամ տարիքային շրջաններում (նախադպրոցական տարիք, դեռահասություն և այլն) ինքնահաստատման առանձնահատկությունները, այդ պահանջմունքի ֆրուստրացիայի դերը տարիքային ճգնաժամերի և այլ հոգեբանական խնդիրների, նաև նևրոտիկ խանգարումների առաջացման գործում:

2. Դեռահասության ճգնաժամը մեծապես պայմանավորված է սեռային ինքնահաստատման գործընթացի առանձնահատկություններով: Դեռահասի սեռային ինքնահաստատման բարձր պահանջմունքի ֆրուստրացվածության դեպքում սուր է ընթանում այս տարիքի զարգացման ճգնաժամը և հակառակը:

3. Տարբեր հեղինակների կողմից (Հ. Ռեմշմիդտ, Մ. Կլե, Ս. Խուդոյան և ուրիշներ) նկարագրվող դեռահասության ճգնաժամի այնպիսի ախտանշանների, ինչպիսիք են տանից փախուստները, կենտրոնացումն այնպիսի հարցերի վրա, ինչպիսիք են՝ ո՞վ եմ ես, ինչո՞ւ եմ ծնվել, հիպոխոնդրիկ տագնապները, դիսմորֆոֆոբիան, դեպերսոնալիզացիոն երևույթները, նարցիսիզմը, մենք կամ չենք արձանագրել ընդահնրապես կամ եզակի դեպքերում ենք հանդիպել:

4. Դեռահասության ճգնաժամի դրսևորման երկու տեսակներ կարելի է առանձնացնել՝ ա/ տագնապներով, աստենիկ, դեպրեսիվ վիճակներով արտահայտվող և՝ բ/ ագրեսիվ վարքով:

5. Դեռահասության ճգնաժամը հարաբերականորեն մեղմ բնույթ է կրում 11, 12 և 16 տարեկանների շրջանում և առավել սուր է դրսևորվում 14-15 տարեկանում: Ճգնաժամի սուր ընթացքին ավելի բնորոշ է դեստրուկտիվ տիպի ինքնահաստատումը. ընդ որում, դեստրուկտիվ ինքնահաստատումը բնորոշ է ճգնաժամի ագրեսիվ դրսևորմանը, իսկ հրաժարումն ինքնահաստատումից՝ պասիվ, տագնապային դրսևորմանը:

6. Ճգնաժամի ընթացքի տարբեր սրություն դրսևորող դեռահասները նախընտրում են ինքնահաստատման տարբեր ոճեր. դեստրուկտիվ ոճը բնորոշ է ճգնաժամի սուր ընթացքին, կոնստրուկտիվ

ոճը՝ մեղմ ընթացքին, իսկ միջին ընթացքին բնորոշ են դեստրուկտիվ և կոնստրուկտիվ ինքնահաստատման ոճերը գրեթե հավասար ձևով:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

1. Դանիելյան Ս. Հ., Խուդոյան Ս. Ս., «Ճգնաժամի դրսևորման առանձնահատկությունները դեռահասի կենսագործունեության տարբեր ոլորտներում», Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան, «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ», Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, Երևան, 2016 թ. , N3, էջ 97-100
2. Դանիելյան Ս. Հ., «Ինքնահաստատման հիմնախնդիրը հոգեբանության մեջ», Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան, «Գիտական տեղեկագիր», Երևան, 2016 թ. , N3-4 (28-29), էջ 45-50
3. Даниельян С. О., «Проблемы и задачи психологичецких служб в армянских школах диаспоры», Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան, «Դպրոցական հոգեբանական ծառայության հիմնախնդիրները», Երևան, 2014 թ. , նոյեմբերի 6-7, գիտաժողովի նյութեր, էջ 40-41
4. Դանիելյան Ս. Հ., «Դեռահասության ճգնաժամի հետազոտությունների վերլուծություն», Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան, «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ», Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, Երևան, 2014 թ. , N2, էջ 93-98
5. Դանիելյան Ս. Հ., Խուդոյան Ս. Ս., «Սեռային ինքնահաստատման պահանջմունքը, դրա ֆրուստրացիան և դեռահասության ճգնաժամը», Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան, «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ», Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, Երևան, 2013 թ. , N3, էջ 108-116
6. Դանիելյան Ս. Հ., «Դեռահասների ագրեսիվությունը բացատրող հիմնական տեսությունները», Զանգակ-97 հր. , «Հոգեբանությունը և կյանքը», Երևան, 2010 թ. , N1-2, էջ 43-45

ДАНИЕЛЬЯН САТЕНИК ОГАНЕСОВНА

ПОДРОСТКОВЫЙ КРИЗИС И ХАРАКТЕРИСТИКИ ПОЛОВОГО САМОУТВЕРЖДЕНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03 «Социальная психология»

Защита состоится 25-го января 2024-го года в 12:00 на заседании специализированного совета по психологии 064 Комитет по высшему образованию и науке по присуждению ученых степеней при Армянском Государственном Педогогическом Университете им. Х. Абовяна, по адресу: Ереван,0010, улица Тиграна Меца, 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Несмотря на многочисленные исследования подросткового возраста и подросткового кризиса, многие научные и практические проблемы, связанные с этим возрастом, до сих пор не решены. Особенно мало изучены закономерности развития, приводящие к кризису, внешние и внутренние факторы, усугубляющие кризис, психолого-педагогические мероприятия, способные предупредить, смягчить и преодолеть подростковый кризис и его последствия. В исследованиях многочисленных авторов кризис подросткового возраста рассматривается с разных сторон. Во многих из них подчеркивается роль полового созревания в возникновении кризиса, но это предположение не подвергалось эмпирическому исследованию, в частности, не исследовалась роль полового самоутверждения в процессе возникновения подросткового кризиса. С практической точки зрения наше исследование актуально в том смысле, что дает возможность лучше понять роль полового самоутверждения в период подросткового кризиса, что крайне важно для правильной организации подросткового психологического консультирования, психотерапии, воспитания.

Объектом исследования является подростковый кризис.

Предметом исследования является роль самоутверждения, в частности полового самоутверждения, в возникновении подросткового кризиса.

Цель исследования выяснить, какую роль играет процесс половой самореализации в период возникновения подросткового кризиса.

Основная гипотеза: предложенная в диссертации, заключается в том, что кризис подросткового возраста во многом определяется особенностями процесса самоутверждения, особенно полового самоутверждения, трудностями, фрустрацией потребности в самоутверждении. Соответственно, высокая фрустрированность потребности в самоутверждении, (особенно половом самоутверждении), обостряет подростковый кризис. Также была выдвинута дополнительная гипотеза, согласно которой острое течение кризиса в большей степени характеризуется деструктивным самоутверждением. причем деструктивное самоутверждение характерно для агрессивного проявления кризиса, а отказ от самоутверждения -для пассивного, тревожного проявления. Легкое течение кризиса больше характеризуется конструктивным самоутверждением, а среднее течение -как конструктивным, так и деструктивным.

Задачи исследования:

5. Изучить теории, научные подходы и концепции, связанные с проявлениями подросткового кризиса, особенностями кризиса и полового самоутверждения личности.

6. Провести экспериментальное изучение проявлений подросткового кризиса, особенностей течения, интенсивности и на основании этого классифицировать подростков по особенностям течения кризиса.

7. Провести экспериментальное исследование характеристик самоутверждения подростков, уровней полового самоутверждения и фрустрации.

8. На основе количественного, качественного и сравнительного анализа результатов эмпирического исследования выяснить, влияют ли уровень и особенности самоутверждения подростков, полового самоутверждения и фрустрация этих требований на течение подросткового кризиса.

Научная новизна исследования - в исследовании выделяются ранее недифференцированные типы самоутверждения - общее и половое ое. Последнее практически не исследовано и не описано в психологии и впервые подвергается детальному теоретическому и эмпирическому исследованию. Анализируются возрастные особенности полового самоутверждения. Показано, что самоактуализация в подростковом возрасте в большей степени имеет половую направленность. Эмпирически установлено, что фрустрация потребности в половом самоутверждении играет важную роль в определении особенностей возникновения и течения подросткового кризиса. Выявлено, что подростковый кризис проявляется двояко: пассивностью, депрессией, тревожностью и агрессивным поведением. Подростки с острым течением кризиса отдают предпочтение деструктивному самоутверждению, с легким течением — к конструктивному, у подростков со средним течением деструктивный и конструктивный стили самоутверждения практически равны.

Теоретическая значимость исследования. Результаты исследования обогащают представление о факторах, способствующих возникновению и обострению подросткового кризиса, показывая, что особенности самоутверждения, в частности полового самоутверждения, влияют на течение кризиса. С другой стороны, подростки с разной степенью кризиса самоутверждаются в разных стилях: конструктивное самоутверждение характерно для легкого течения, деструктивное - для острого течения, а при среднем течении обнаруживаются оба стиля.

Практическая значимость исследования. Результаты исследования могут быть использованы в областях психологического консультирования и психотерапии, связанных с подростковыми проблемами, в процессе воспитания подростков. Выявленные в ходе исследования факты могут быть использованы на занятиях по психологии личности и кризисам развития.

Структура и обьем диссертации. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка литературы (114 наименований) и приложения. Содержит 12 рисунков, 14 диаграмм. Объем работы составляет 125 страниц.

Во введении обоснована актуальность темы, представлены предмет, исследования, степень разработанности проблемы, сформулированы цель, гипотеза, задачи исследования, научная новизна, теоретическая и практическая значимость работы, представлены методические и теоретические основы, методы исследования, положения, выносимые на защиту.

Первая глава «Кризис подросткового возраста и проблема самоутверждения» посвящена анализу подросткового возраста, самоутверждения, социально-психологических подходов к данным проблемам.

Во второй главе «Трудности полового самоутверждения и кризис подросткового возраста» представлена суть и особенности полового самоутверждения, проанализировано влияние фрустрированности самоутверждения на разные сферы психики, а также представлены теоретические основы исследования в целом и гипотезы в частности.

В третьей главе «Фрустрация потребности полового самоутверждения и собенности кризиса подросткового возраста: эмпирические исследования» представлены цель, задачи, этапы эмпирического исследования, детально описаны организация, методологическое обеспечение исследования, представлен психологический анализ результатов исследования.

Работа завершается **общими выводами**.

По теме диссертации опубликовано 6 статей.

SATENIK H. DANIELYAN

ADOLESCENT CRISIS AND CHARACTERISTICS OF SEXUAL SELF-EXPRESSION

Thesis submitted for the Degree of Candidate of Psychological Sciences in the specialty of 19.00.03 "Social psychology".

The official (public) defense of the thesis will take place on 25 Jenuary, 2024, at 12:00 PM at the meeting of Degree awarding specialized council 064 of The Higher Education and Science Committee of the Republic of Armenia at Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan (ASPU).

Adress: RA, Yerevan, 0010, Tigran Mets 17 street.

SUMMARY

The relevance of the research. Despite numerous studies of adolescence and adolescent crisis, many scientific and practical problems related to this age have not yet been resolved. Developmental patterns leading to crisis, external and internal factors aggravating crisis, psychological-pedagogical measures capable of preventing, mitigating and overcoming adolescent crisis and its consequences are especially poorly studied. In the studies of many authors, the crisis of adolescence is considered from different sides. In many of them, the role of sexual maturation in the emergence of the crisis is emphasized, but this assumption has not been subjected to empirical research, in particular, the role of sexual self-expression (self-expression as a man/woman) in the process of the emergence of a teenage crisis has not been investigated. From a practical point of view, our study is relevant in the sense that it gives an opportunity to understand better the role of sexual self-expression during the adolescent crisis, which is extremely important for the proper organization of adolescent psychotherapy and education.

The object of the research is the adolescent crisis.

The subject of the research is the role of self-expression, in particular sexual self-expression, in the emergence of adolescent crisis.

The purpose of the research is to reveal the role of the sexual self-expression during the period of the teenage crisis.

The **main hypothesis**: it is supposed that the crisis of adolescence is largely determined by the peculiarities of the process of self-expression, especially sexual self-expression and the difficulties, frustration of the need of self-expression. Accordingly, the higher the frustration of the need for self-expression, the more acute is the adolescent crisis. An additional hypothesis was also put forward, according to which the acute course of the crisis is characterized to a greater degree of destructive self-expression. Destructive self-expression is characteristic of an aggressive manifestation of a crisis, and refusal of self-expression is characteristic of a passive, anxious manifestation. The mild course of the crisis is more characterized by constructive self-expression, and both constructive and destructive types of self-expression characterize the medium course.

Research objectives:

1. To study the theories, scientific approaches and concepts related to the manifestations of the adolescent crisis, the features of the crisis and the sexual self-expression.

2. To conduct an experimental study of the manifestations of the adolescent crisis, the features of the course, the intensity, and based on this, to classify teenagers according to the features of the course of the crisis.

3. Conduct an experimental study of the characteristics of adolescent self-expression, levels of and the frustration of the need for sexual self-expression (self-expression as a man/woman).

4. On the basis of quantitative, qualitative and comparative analysis of the results of empirical research, find out how the level and features of self-expression (sexual self-expression) of teenagers, and the frustration of these requirements affect the course of teenage crisis.

The scientific novelty of the research.

In the study, previously undifferentiated types of self-expression are distinguished – general sexual self-expression and sexual self-expression (self-expression as a man/woman). The latter has practically not been investigated and described in psychology and it is being subjected to detailed theoretical and empirical research for the first time. Specific age features of sexual self-expression are analyzed. It is shown that self-actualization in adolescence has a sexual orientation (self-actualization as a man/woman). It is empirically established that the frustration of the need for sexual self-expression plays an important role in determining the characteristics of the emergence and course of the adolescent crisis. It is revealed that the adolescent crisis manifests itself in two ways: passivity, depression, anxiety and aggressive behavior. Adolescents with an acute course of crisis prefer destructive self-expression, with a mild course — to a constructive one, in teenagers with an average course, the destructive and constructive styles of self-expression are practically equal.

Theoretical significance of the research. The results of the research enrich the understanding of the factors contributing to the emergence and exacerbation of the adolescent crisis, showing that the characteristics of self-expression, in particular sexual self-expression, influence the course of the crisis. On the other hand, teenagers with different degrees of crisis assert, confirm themselves in different styles: constructive self-expression is characteristic for mild course of the crisis, destructive - for acute course, and in average course both styles are found.

Practical significance of the research. The results of the research can be used in the fields of psychotherapy of adolescent problems, in the adolescents' educational process. The facts revealed during the research can be used in subjects on personality psychology and developmental crises.

Structure of the dissertation. The dissertation consists of an introduction, three chapters, conclusions, a bibliography (114 names) and an appendix. The work contains 12 pictures, 14 diagrams. The volume of the work is 125 pages. 6 articles are published on the topic of the dissertation.

In the **introduction** the actuality of the theme is proved, the object of the research, the contemporary state of the problem are presented, the purpose, the hypothesis and the tasks of the research are formulated, the sciantific novelty, the theoretical and practical significance, the empirical metods, the theses which are submitted for defence are presented.

The first chapter, «The crisis of adolescence and the problem of self-expression», is devoted to the analysis of adolescence, self-expression and socio-psychological approaches to these problems.

The second chapter, «Difficulties of sexual self-expression and the crisis of adolescence», presents the essence and features of sexual self-expression, analyzes the influence of frustrated self-expression on various areas of the psyche, and also presents the theoretical bases of the research and of the hypotheses.

The third chapter, «Sexual self-expression need frustration and the pecularities of the crisis of adolescence: empirical research», presents the goal, tasks, stages of empirical research, describes in detail the organization and methodological support of the study and presents a psychological analysis of the research results.

The work ends with **general conclusions**.

Six articles are published on the subject of the dissertation.